ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2020 թվականի N 1619

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1607 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 26 օգոստոսի 2020 թվականի թիվ 1607 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 26 օգոստոսի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Երևանյան խճ. թիվ 10/2 հասցեում գտնվող գույքին նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1607 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ «ք.Վանաձոր,» բառերից հետո «Երևանյան խճուղի» բառերը փոխարինել «Զորավար Անդրանիկի փողոց» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. օգոստոսի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2020 թվականի N 1620

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐ.ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 52 ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՌԱՆԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՄԱՌԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահրամ Վարդանի Ծատինյանի դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Գր.Լուսավորչի փողոցի թիվ 52 շենքի բակում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 11.39քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 9.76քմ) մառանի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 11.39քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մառանի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մառանը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Գր.Լուսավորչի փողոցի թիվ 52 շենքի բակում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Գր.Լուսավորչի փողոց, թիվ 52/10 մառան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. օգոստոսի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2020 թվականի N 1622

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼՈՌՎԱ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ «ՎԱՆԱՆԱՎԱԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՌԵՍՏՈՐԱՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՎԱՆԱՆԱՎԱԿ» ՍՊԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Տարոն Սեդրակի Թորոսյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30072020-06-0052 վկայականը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագրերը, 10.08.2020թ. տրված տեղեկանքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով և 32-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Լոռվա խճուղի թիվ 1/3 հասցեում «ՎԱՆԱՆԱՎԱԿ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող ռեստորանը և դրանով զբաղեցված հողամասը՝ համաձայն ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Լոռվա խճուղի թիվ 1/3 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 0.1126հա մակերեսով հողամասի և 709.35քմ մակերեսով գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Լոռվա խճուղի թիվ 1/3-1 ռեստորան (հատակագիծ թիվ 1).

բ) 0,0134հա մակերեսով հողամասի և 6.4քմ մակերեսով գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Լոռվա խճուղի թիվ 1/3 պարիսպ (հատակագիծ թիվ 2):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. օգոստոսի 31
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2020 թվականի N 1623

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԵՅՐԱՆԻ ԱՄԻՐԲԵԿՅԱՆԻՆ ԲՆԱԿՄԱԿԵՐԵՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 02-Ի ԹԻՎ 1577 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի Իսահակյան փողոցի 1-ին նրբ. թիվ 7 շենքի թիվ 15 բնակարանի բնակիչ Քրիստինե Սեյրանի Ամիրբեկյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Քրիստինե Սեյրանի Ամիրբեկյանին, Մաքսիմ Արթուր Ամիրբեկյանին և Դմիտրի Իլյիչի Ամիրբեկյանին հատկացնել ժամանակավոր բնակմակերես՝ Երևանյան խճուղու թիվ 90 հանրակացարանի թիվ 316 սենյակը:

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքապետի 2005 թվականի նոյեմբերի 02-ի «Արման Ղազախեցյանին բնակմակերես հատկացնելու մասին» թիվ 1577 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. օգոստոսի 31
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2020 թվականի N 1624

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 474 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 04/08/2020թ. թիվ Կ-04082020-06-0034 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 26 փետրվարի 2020 թվականի թիվ 474 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 26 փետրվարի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտայի թիվ 65/2 հասցեի հողամասի նպատակային,գործառնական նշանակությունը հաստատելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 474 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման վերնագիրը «հաստատելու» բառից հետո լրացնել «,հողամասի գործառնական նշանակությունը փոխելու» բառերով:

2) Որոշման 1-ին կետում «հասարակական» բառը փոխարինել «բնակելի» բառով:

3) Որոշման 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ կետով. «2. Փոխել Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտայի թիվ 65/2 հասցեում գտնվող 0.02764հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ որպես հասարակական կառուցապատման հողեր:»:

4) Որոշման 2-րդ կետը կարդալ որպես 3-րդ կետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. օգոստոսի 31
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2020 թվականի N 1625

ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ԷԼԵՈՆՈՐԱ ԿԱՐԱՊԵՏԻ ՊԱՊՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարինե Թենգիզի Պապյանի դիմումը անգործունակ աղջկա նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2020 թվականի օգոստոսի 27-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 14, կետ 1), հաշվի առնելով, որ Էլեոնորա Պապյանը Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի փետրվարի 21-ի թիվ ԼԴ/2451/02/19 վճռով ճանաչվել է անգործունակ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոցի թիվ 52 տան բնակիչ Կարինե Թենգիզի Պապյանին (ծնված՝ 14.07.1964թ., անձնագիր՝ AN 0769128, տրված՝ 25.12.2013թ. թիվ 066-ի կողմից) նշանակել համատեղ բնակվող անգործունակ աղջկա՝ Էլեոնորա Կարապետի Պապյանի (ծնված՝ 07.01.1988թ., անձնագիր՝ AS 0650851, տրված՝ 17.06.2019թ., 066-ի կողմից) նկատմամբ խնամակալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. օգոստոսի 31
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2020 թվականի N 1626

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 11 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1548 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովիկ Մեխակի Վերանյանի և Հայկ Մեխակի Վերանյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 11 օգոստոսի 2020 թվականի թիվ 1548 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 11 օգոստոսի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Սունդուկյան փող. թիվ 57 հասցեի բնակելի տան և շինությունների նկատմամբ Հայկ Մեխակի Վերանյանի և Հովիկ Մեխակի Վերանյանի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցեն հաստատելու մասին» թիվ 1548 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման վերնագրում «փոստային հասցեն հաստատելու» բառերը փոխարինել «նոր փոստային հասցե տրամադրելու» բառերով:

2. Որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Վանաձոր քաղաքի Սունդուկյան փող. թիվ 57 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Սունդուկյան փողոց, թիվ 57-2/2 բնակելի տուն:»

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. օգոստոսի 31
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2020 թվականի N 1627

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 31/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐԴԳԵՍ ԱԼԵՔՍԻԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարդգես Ալեքսիի Մինասյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05082020-06-0051 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և 35-րդ կետի գ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 31/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 2.95քմ մակերեսով պարիսպը 10030 (տասը հազար երեսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 46.19քմ մակերեսով հողամասը 88410 (ութսունութ հազար չորս հարյուր տասը) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Վարդգես Ալեքսիի Մինասյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Վարդգես Մինասյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պարսպի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. օգոստոսի 31
ք.Վանաձոր